

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՔ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ Ն. ԱԴՈՆՑԻ ՆՈՐ ԳՐԹԻ ՎՐԱՅ¹⁾,

1

Վրիպակներ. Ն. Ադոնցի այս ստուար և խիստ արժէքաւոր գործը. որ բռնում է CXCIII+307 էջ և որի մօտ երկու երրորդը ձեռագիրների համեմատութեամբ լոյս ընծայւած բնագիրներ են՝ դժւար էր անշուշտ առանց վրիպակների տպագրել: Հեղինակն իր գրքի վերջում վրիպակների ցանկ է գրել, որ բռնում է էջ ու կէս: Սակայն այդ ցանկից դուրս մնացել են վրիպակներ և այդ հանդամանքը տարակոյսի մէջ է դրում ընթերցողին: Մի քանիսն այդ վրիպակներից դուրս ուղղելի են. բայց կան և այնպիսիները, որ չգիտէք բնագրից են բխում, թէ անուշադիր սրբագրութիւնից: Գլխատորապէս այդ կարգի վրիպակներն են, որ գրուել են մեր ուշագրութիւնը:

Ոչ մի դժւարութիւն չկայ անշուշտ ուղղելու այսպիսի վրիպակներ.

էջ XXX, 10 «և ապա զկատարելագոյնան ի նոցանէ» — անշուշտ ուղղելի է՝ զկատարելագոյնան:

Կամ թէ էջ LII, 16. «ե. զաձեալ մակրայ», որ պիտի լինի — զառձեալ. և կամ էջ LXI. աթճա (1, 10, 100, 100) որ պիտի լինի — (1, 10, 100, 1000):

Բայց կան և ուրիշ կարգի վրիպակներ: Այսպէս. էջ VIII, 17. Աւաղ կենացս ստի չաղար ալփ, վայ դիս ճհ, ճհ, Պիտի լինէր — ալփ, այսինքն՝ «աւաղ կենացս հարիւր հազար օֆ»:

էջ. XVII զՇմաւոն վրճս յիշեցէք որ զքերական գիրքս ի Սարկաւագանց վանիցն բերաք ի վասն եւստաթէի ս՛ր առաքելոյս: Անկասկած պիտի կարդալ — ի վանս:

էջ XIII զմնդապարտ գրիշս զՎարդերեսըս Լեհըցիս յիշեցէք

1) Діонисій Թրակійскій и армянскіе толкователи, Петр. 1915.

ի տէր. ա զրիչով ա տետր իմ գրեր, օրն ա տետր: Իմ-ը վրիպակ է թէ՛ բարբառի հետք, դժւար է ասել:

Էջ XXII և մնայաք մինչև ի թիւս թւականին ԶԽԲ և վատանանայա՛մ յողորմութիւնն աստուծոյ պարգև լինել շինութեան աշխարհիս յոռոյ և սիրոյ թագաւորին, որ յաստուած և ի սուրբս նորա: Ընդդած բառերն անկասկած պիտի կարգալ վատահայաք, յուսոյ:

Էջ XXIII յիշել ընդ նմին (Հեթմոյ) և զսրբասնունդ և զբարեբարու և զբարս նորա, զորս անուպանէր երկիւզիւ տեառն: Պիտի լինի անշուշտ—սնուցանէր:

Էջ XXIV ևղև սկիզբն և յաւարտումն գրի, որ է տումար և քերական հետ երկոքին ի մի տեղեւ մի կապ: Մեզ թւում է՝ պէտք էր տպել—ի մի տեղ եւ մի կապ:

Էջ XXXVII դտան զգիրս նախ քան զդասն մատեանն Մովսէսի: Վրիպակ է դասն, թէ այդպէս գրուած է ձեռագրում—դժւար է ստոյգ ասել:

Այդպէս նաև էջ XLI—քիզ պատճառ ցոցակե. վրիպակ է, թէ խոնարհման մի ձև:

Էջ LXXXVI և ետ դուզնաքեա անապատ ի հանդիստ և դիւտ անքեւանի. անշուշտ—աւթեանի:

Էջ CXLI. ծանօթ. նման է փցուն խոհակերի, որ ոչ ըստ յաւդից առն է գրակմունս. Պիտի լինի առնէ:

Էջ CXLV. ի պիտակեն և ի սեոյ գորշն: Պիտի լինի—ի սպիտակէն, ինչպէս և տպւած է էջ 91-ում:

Էջ CXVII. հողմոյ=հողմոյ:

Էջ CII. յանդիմանութիւն վատ կենցաղավարելոցն և անարի ծուլիցն և ընչասիրացն, որ ունի իրաւս և յանդիմանութիւնս: Անշուշտ—խրատս, ինչպէս և տպւած է էջ CIV-ում:

Էջ 57. դամբանական—գերեզմանական: Վրիպակ է թէ ունենք այդպիսի մի բառ «գերեզմանական» բառի կողքին:

Էջ 58. ամանակ—նուաղ մասն ժամանակի: Վրիպակով է գրւած, փոխանակ նուաղ-ի, թէ՛ կայ այդպիսի արտայայտութիւն:

Էջ 235. «Յերածշտականէ ումեմն և ուսեալ մեր: Պիտի լինի—ումեմնէ:

2

Պնդումներ անբաւարար հիմունքով: Էջ V նկարագրելով Էջմիածնի թիւ 2297(=2253) ձեռագիրը, Ն. Ադոնց ասում է. «Փոքրադիր ձեռագիր, որ գրել է համբաւաւոր Գրիգոր Տաթեւացին իր ուսուցչի՝ ոչ պակաս համբաւաւոր Յովհան Որոտնեցու պատէրով: Հետեւեալ էջում բերում է գլխաւոր յիշատակարանը. «Զբստացող սորին զտիեզերալոյս մեծ վարդապետն հայոց Յովհաննէս Որոտնցի և զիս սակաւ աշխատողս Գրիգոր սպասաւոր նմին ազաչեմք զձեզ յիշել ի տէր ամեն: Այս յիշատակարանը բաւարար հիմք չի տալիս հաստատապէս պնդելու թէ յիշատակած Գրիգորը Տաթեւացին է: Կարող է լինել և Գրիգոր Խլաթեցին, որ նոյնպէս Յ. Որոտնեցու աշակերտն էր և զբասէր ու գրիչ, որ «յիսուն և հինգ ամ զիրս գրեաց տիւ և զիշեր անհանգիստ տըքնութեամբ»^{*)}:

LXXIV էջում հեղինակն ասում է. «Աւանդութիւնը յիշեալ անձանց (Մամբրէ, Դաւիթ, Մովսէս) մինչև իսկ կապում է ազգակցական մերձաւորութեամբ: Մամբրէն համարւում է Մովսէսի եղբայրը, իսկ Դաւիթը նրանց քւերորդին—խիս կօսկածելի եւ վստահութեան անարժան տւեալներ: Ո՞րն է հիմքը ընդգծած տողերի: Բացարձակօրէն անհնարին չէ որ նրանք ազգական լինէին. մենք ունինք Պատկանեան ընտանիքի օրինակը: Կարելի է աւանդութեան վրայ չյենւել, բայց անվերապա՝ ժխտման համար բաւարար հիմունքներ են պէտք:

Էջ LXXVII ծանօթութեան մէջ հեղինակը գրում է. «Կարապետ վարդապետի՝ ներկայումս եպիսկոպոս՝ հրատարակած «Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ բանին» մէջ կարդում ենք. «և արդ ճն առեալ զարհամարհելիսն նոցա բանս ծիծաղելիս յարկացուցից եւ տապալեցուցից ի զօրութենէ պատրաստ օգնականին մերոյ Քրիստոսի (էջ 5): Դիոնիսիոսի ազգեցութիւնը բերւած խօսքի մէջ ահնջայտ է: Այն հանգամանքը, որ բնորոշ խօսքը պատահում է Յովհ. կաթողիկոսի և Խոստովանութեան մէջ, կարող է հիմունք ծառայել յոգուտ Խոստովանութիւնը կաթողիկոսին վերագրելու և ոչ Օձնեցուն»:

Ընդգծած տողը միմիայն մի բանի բաւարար հիմք կարող է լինել—որ Խոստովանութեան հեղինակը ծանօթ է եղել Թրակացու քերականութեան, բայց չի կարող ապացոյց լինել հեղինակներին

^{*)} Յիշատակարան աղէտից Գրիգորի Խլաթեցւոյ, Վաղարշապատ, 1897, էջ՝ Դ, է: Նաեւ Հայոց Նոր Վկաները. էջմ. էջ. 267.

նոյնութեան: Թրակացուն կարդացել և ուսումնասիրել են Օձնեցունց առաջ և յետոյ: Ընդգծած խօսքը կարող էր թէ Օձնեցուն և թէ Դրասխանակերացուն միասկէս դուր գալ: Օձնեցու անունով յայտնի ճառը Դրասխանակերացուն վերագրելու համար աւելի զօրաւոր և հաստատուն հիմունքներ են պէտք:

Էջ CXXXII. «Սահմանք»ի մէջ ճարտասանութիւնը բաժանւած է երեք տեսակի—յատենական, քաղխոհական և կացրդական: Քանի որ Թրակացու քերականութեան մեկնիչ Դաւիթն ևս ճարտասանութիւնը նոյն կերպ է բաժանում և նոյն բառերով, Ն. Աղոնց ենթադրում է, որ կարելի էր Դաւիթն Սահմանքի թարգմանիչ համարել: Բայց Սահմանքի մէջ այդ բաժանումը նկատւած է առջ քարւոք: Հետևապէս, ասում է հեղինակը, մեր Դաւիթը չի կարող Սահմանքի ոչ հեղինակը և ոչ թարգմանիչը լինել: Այսպիսի պնդում անելու համար շատ աւելի հաստատուն հիմունքներ են պէտք: Նախ՝ մի՞թէ անհնար է ենթադրել, որ Դաւիթն իր կարծիքը փոխել է ժամանակի ընթացքում, եթէ մի վայրկեան ընդունենք որ նա է Սահմանքի և Մեկնութեան հեղինակը, և ապա՝ մի՞թէ որ և է երկի թարգմանիչ ամեն կէտում համաձայն է իր թարգմանած հեղինակի բոլոր մտքերին: Սահմանքը կարող է մի բան համարել «առջ քարւոք», իսկ նրա թարգմանիչը իր մի ուրիշ ինքնուրոյն երկի մէջ նոյն բանը համարել «քարւոք»: Եթէ ուրիշ հաստատուն հիմունքներ լինէին Դաւիթի և Սահմանքի աւնշութիւնը պարզող՝ այդ դէպքում Ն. Աղոնցի դիտողութիւնը կարող էր ուժ տալ այս կամ այն կարծիքին: Անշատ առած՝ այդ դիտողութիւնը չի կարող հիմնաւորել որ և է արժէքաւոր պնդում:

Երզնկացին ձեռքի տակ ունենալով իրանից առաջ եղած մեկնիչների գործերը՝ նրանցից քաղելով կազմել է իր մեկնութիւնը: Հակառակ Երզնկացու բացորոշ յայտարարութեան՝ Ն. Աղոնց այն կարծիքն է յայտնում, թէ Երզնկացին եթէ մինչև իսկ ձեռքի տակ ունեցել է Դաւիթի, Մովսէսի և այլոց մեկնութիւնները՝—չի օգտւել նրանցից: Նա գոհացել է միայն Մազիստրոսի քաղւածական վաստակով: Բայց հարց է ծագում ուսկից դիտէ Երզնկացին թէ Մազիստրոսի բերած այս կամ այն հատւածը այս կամ այն հեղինակին է պատկանում, քանի որ Մազիստրոսի մեկնութեան ձեռագիրներում լուսանցքների մէջ կամ

այլուր այդպիսի ցուցումներ չկան։ Ազոնցին այնքան հիմնա-
ւոր է թւում իր պնդումը, որ վերի հարցումին պատասխան
տալու համար ենթադրում է, թէ Մազիստրոսի ձեռագիրը սկզբ-
նապէս ունեցել է լուսանցքներում ցուցումներ և Երզնկացին
այդ տեսակ ցուցումներ ունեցող ձեռագրից է օգտուել։

Այլապէս ինչ բացատրութիւն կարելի է տալ այն երևոյթին,
ասում է Ն. Ազոնց, որ Մազիստրոսի սխալները մենք նկատում
ենք կրկնւած նաև Երզնկացու աշխատութեան մէջ։ Այսպէս օրի-
նակ երկիր բառը Մազիստրոսը մի տեղ հասկանում է երկրորդ
իմաստով։ Նայն բանը Երզնկացին արտադրում է անփոփոխ.
«միջոցով կարելի է ուրիշ վերաբերում ուղարկել», ասում է Ազոնց,
երեւա (Երզնկացին) բնագրի հետ գործ ունենալ» (էջ CXII)։

Բերելով երկու օրինակ ևս, Ազոնց գրում է. «Շատ անգամ
Յովհանն (Երզնկացին) գանգատւում է, որ մեկնիչների բառերը
անյարիր էին (СОНВЧИБЫ) և ինքը դժւարանում էր միջից դուրս
հանել. գանգատը ահաւորի կը լինէր երեւա ունենալ մեկնիչների
բուն երկիրը. (նայն էջ)։

Վերջապէս եթէ Երզնկացին այդ հին մեկնիչների գործերը
ձեռքի տակ ունէր՝—ինչո՞ւ ուրեմն չի լրացրել Մազիստրոսի պա-
կաս թողածները։ Երզնկացին ասում է, թէ Թրակացու շատ
դուխներն ու յօդւածները Մազիստրոսը թողել էր առանց մեկ-
նութեան և ինքն աշխատել է լրացնել։ Մենք տեսնում ենք, որ
եթէ նա որ և է բան աւելցրել է, ապա առել է ուրիշ աղբիւրնե-
րից և ոչ թէ յիշատակներէն։ «Տարօրինակ չէ», նկատում է
Ազոնց, սր նա բողոքում է նախաջամ հեղինակութիւններին և դի-
մում է անյայտ անձանց օգնութեան—այլ, այլուստ և այլն։

Մեր ընդդժառ խօսքերից հետեւում է, որ Ազոնց, չգիտենք
ինչ բաւարար հիմունքներով ենթադրում է, թէ Երզնկացու ձեռ-
քին եղած մեկնութիւնները անսխալ և անփոփոխ են եղել։ Բաւա-
կան է ընդունենք մի վայրկեան, որ Երզնկացու ձեռքին եղել է
մի խանգարում ձեռագիր—և կը վերանայ «երկիր» բառի մասին
եղած նկատողութիւնը։ Բաւական է ենթադրել որ Երզնկացու
ունեցած ձեռագիրն եղած է քերի—կը վերանայ և այն նկատո-
ղութիւնը թէ ինչո՞ւ Երզնկացին չի լրացնում Մազիստրոսի պա-
կաս թողածը։ Այդ խանգարումն ու այդ թերութիւնը կարող է
շատ հին եղած լինել. աւելի վաղ քան Մազիստրոսը և դրանով
կարելի է մեկնել Երզնկացու և Մազիստրոսի միանման պակաս-
ները։ Եւ շատ հաւանական է, որ եթէ մի—մի տեղ Երզնկացին
լրացնում է Մազիստրոսի պակասները, այդ էլ անում է, առնե-
լով իր խօսքով ասենք՝ «յայլ իմաստասիրական գրոց դարձաւ»

և զդէպն և զնմանն» (էջ LXXXIX) և ուրեմն իրաւունք ունէր գրելու՝ այլ, այլուստ:

Իսկ որ շատ հին խանդարումներ ու թերիներ կարող են երկար դարեր շարունակել, դրա լաւագոյն օրինակը բերում է ինքն Ադոնցը—Թրակացու քերականութեան ձեռագիրը համարելով հնուց խանդարւած, քանի որ Թրակացու մի քանի խանդարումները գտնում է դեռ Համամ Արևելցու մեկնութեան մէջ (Թ. դար) (էջ XLVII): Այսպէս ուրեմն երկիր և միւս խանդարումները ինչպէս և թերիները առաջ ենթադրելով քան Մագիսարոսը, մենք բաւարար լուծում տւած կը լինենք Ադոնցի տարակոյտներին, և ուրեմն հարկ չի լինի ենթադրելու, թէ Մագիսարոսի ձեռագիրը սկզբնապէս լուսանցում ցուցումներ է ունեցել այն մասին, թէ որ հատւածը ումից է առնւած. հարկ չի լինի թիրահաւատ վերաբերում ունենալու դէպի Երզնկացու բացորոշ խօսքերը իր աշխատութեան եղանակի մասին, որով և նրա աշխատանքի բնոյթը տարրեր չի ներկայանայ, քան նա գտնւած է իր երկի յառաջարկւած (էջ LXXXIX):

էջ LXXXIX Երզնկացին գրում է. «... Ուսումնասէր պարոնն Յոհաննէս ... գտեալ ուրեք օրինակս հին և տւեալ փոխել յորում եր 'Էաւրի փիլիսոփային եւ Մովսէսի բերողին եւ այլ Գ մեկնիցս առանց աւելան մեկնողին...» Ընդգծած բառերը Ն. Ադոնց թարգմանել է. Въ немъ находились труды философа Давида, кердола Маисея и еще третьяго толкователя безъ имени автора: Եթէ մեկնիցս բառի ս-ն տառասխալ չէ, արդեօք չէր կարելի Գ մեկնիցս հասկանալ, ոչ թէ երբող, այլ երեք մեկնից իմաստով: Յամենայն դէպս, աւելորդ չէր լինի մի ծանօթութիւն այն մասին, թէ ընդգծած բառերը կարելի է և «երեք մեկնիչ» առումով ևս հասկանալ:

Վստմումի մի փորձ: Ո՞վ և երբ է թարգմանել Թրակացու քերականութիւնը—յայտնի չէ. Ադոնցի գիրքն ևս այդ հարցը չի լուծում: Թրակացու մեկնիչ Դաւթին նա հնարաւոր է համարում հասցնել մինչև է դարը (էջ CXCIII): Յանդգնութիւն չունենք մարդն ու ժամանակը որոշելու, բայց ճիշտիւ է թարգմանւած Թրակացու քերականութիւնը—այդ մասին է, որ մի դիտողութիւն պիտի անենք:

Թրակացու քերականութեան թարգմանիչը յոյն բնագրին համարժէք օրինակներ է բերում՝ առնելով հայ լեզուից, նման գէպքերում բնական է, որ մարդիկ պէտք եղած օրինակը գտնելու համար առաջին նշագ միտք են բերում ամենից աւելի դորժանական բառերը, որովհետեւ այդ բառերն են ամենից առաջ լիզւի ծայրը գալիս: Արդ՝ էջ 9, մենք կարդում ենք մի շարք բառեր, որ բերած են ցույց տալու համար թէ բառերը կարող են բոլոր բաղաձայններով վերջանալ: Սովորական բառերի շարքում, ինչպէս են ողբ, ազգ, մարդ, պարզ, բազէ և այլն-կարդում ենք նաև. Մանուկ, կիճն, խոյ, Տաւաճ, հիւս, Խաւրով:

Երբ բերում է հայրանունական բառերի օրինակներ, յոյն յատուկ անուններին համարժէք դնում է. Համալսապետն Մանուկ (էջ 13-14):

Անւան տեսակներն, աւելում է, երեք են. պարզ, բարդ, յարմարադ. և բերում է օրինակներ. Մանան, Էաջ Մանան, Էաջ Մանուկ (էջ 16):

Կան, ասում է, յոգնակի բառեր, որ եղակի զաղափարի համար են դորժածում և բերում է օրինակ՝ Խոյաւստնի, Յրաւնի (էջ 17):

Պարունակ անւանց օրինակներ բերելիս յիշում է որսնց, բնկուլուտ, կրոց (էջ 21):

Բերում է իգական անուններ և շարում է՝ Վարդենի, Մայմանուե, Տրդատունի, վարդոց (էջ 14):

Կարելի է մտկաբերել, որ թարգմանիչն ապրում է մի երկրում, որ ձեան հիւս կայ, որթ, քնկուղենիներ, այգիներ (էթոց). Տարօն ու Յրսնքը, Մամիկոնեան տան անունները, այս ամենը մեզ թւում է կարող են հիմք լինել կառնելու, թէ թարգմանութիւնը եղած է Տարօնում: Ու եթէ նկատի ունենանք, որ Մուշի մօտ է Առաքելոց վանքը, որի հետ աւանդութիւնը կապում է թարգմանիչներին և նրանց դորժունէութիւնը—մեր կառնումը համարեալ մօտենում է հաւանական ենթադրութեան:

Հետաքրքրական է որ Մովսէս քերթողը, երբ բերում է հայրանուան օրինակներ, Թրակացու թարգմանչի Համալսապետն Մանուկի փոխարէն դնում է. «ի հաւրէ Սահակայ՝ Սահակեան» (էջ 176):

Քերթողահայրն է արդեօք, որ չի մոռանում իր մեկինասին...

Ն. Ա.

